ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ԿԱՄՔԻՆ ՀԱԿԱՌԱԿ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՏԵՂԱՄԱՍԵՐ «ԲԵՐՄԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ» ԴԵՊՔԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվի առնելով բոլոր նախորդ ընտրությունների ժամանակ.

- առավել տարածված և առավել չբացահայտված, չկանխված խախտումների՝ ընտրակաշառքների բաժանման, ընտրողներին ընտրական տեղամասեր բերման ենթարկելու արատավոր պրակտիկան,
- նման խախտումների կանխման և բացահայտման ուղղությամբ ՀՀ իրավապահ մարմինների անմիջական պարտավորությունը,
- պահանջում ենք ՀՀ ոստիկանության ղեկավարությունից 2017թ. ապրիլի 2-ի ՀՀ Ազգային Ժողովի ընտրությունների վերաբերյալ ոստիկանության շտաբի կողմից տարածվելիք հաշվետվությամբ ներկայացնել վերը նշված խախտումներով դեպքերի կանխման և բացահայտման ուղղությամբ իրականացված օպերատիվ հետախուզական գործողությունների և նրանց արդյունքների մասին:

Նման հաշվետվության բացակայությունը կվկայի առավել տարածված և առավել վտանգավոր ընտրական խախտումների դեպքերով ՀՀ ոստիկանության կամ կանխամտածված անգործության, կամ անկարողության մասին:

1 ապրիլի 2017թ.

ք. Վանաձոր

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am